

«ԿԱՆԹԵՂ» ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԿ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ <<ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ
ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ>>

Կատարող՝ ԱՎԴԱԼՅԱՆ ԿԱՐԻՆԵ ԺՈՐԴԿԻ
Պատասխանատու՝ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ.....	4
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	32
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	33

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Լեզվի գործնական ուսուցման պահանջը ժամանակի հրատապ, կենսական խնդիրներից է, քանի որ լեզուն հաղորդակցման հիմնական միջոցն է: Իսկ հաղորդակցումը պարզապես կենսական պահանջ է:

Շատ է խոսվում լեզվի ուսուցման գործնականության ապահովման մասին, ինչի բարձր մակարդակի ապահովումը անհրաժեշտ նախադրյալներ կստեղծի ազատ, անկաշկանդ ու անսխալ հաղորդակցվելու կյանքի այս կամ այն բնագավառներում:

Ուսուցչի գերխնդիրը պետք է լինի ոչ թե լեզվական կանոնների անգիր ուսուցումը, ալ սովորածը գործնականում կիրառելու կարողունակությունների և հմտությունների զարգացումը: Ճիշտ և գրագետ, առանց լեզվական-քերականական սխալների թ'ե գրավոր, թ'ե բանավոր խոսք կառուցելուն կօգնի լեզվի գործնական ուսուցումը:

Այսօր ուսուցիչը ազատ է դասը պլանավորել և կազմակերպել այնպես, որ մոտիվացնի աշակերտներին, ապահովվի նրանց արդյունավետ, գործուն մասնակցությունը դասընթացին, խթանի նրանց ուսումնական հետաքրքրասիրությունը:

ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Լեզուն հաղորդակցման հիմնական միջոցն է, իսկ հաղորդակցումը պարզապես կենսական պահանջ է, ուստի լեզվի գործնական ուսուցման պահանջը ժամանակի ամենաիրատապ և կենսական խնդիրներից է:

-Իսկ ի՞նչ է նշանակում լեզվի գործնական ուսուցում (այս հարցով դիմել լսարանին կամ «մտազրոհ» կազմակերպել):

Նշանակում է՝

ա) լեզվի ուսուցումն այնպես կազմակերպել, որ յուրացումը լինի գիտակցական,

բ) սովորած գիտելիքները դառնան գործնական կարողություններ,

գ) որ գրավոր և բանավոր խոսքում չլինեն այնպիսի լեզվական սխալներ, որոնք աշակերտը սովորել է դպրոցում:

1. Ուսուցման ձևեր, մեթոդներ, եղանակներ ընտրելիս պետք է նկատի ունենալ ուսուցանվող թեմայի գործնական նշանակությունը և արժեքը և համեմատաբար քիչ ուշադրություն դարձնել այն թեմաներին, որոնք թեև նախատեսված են ծրագրով, բայց ըստ էության չունեն գործնական արժեք և ծրագրում ընդգրկվում են նյութի ամբողջությունն ապահովելու պատճառաբանությամբ:

Նման դեպքերում ուսուցիչը կարող է կատարել ծրագրային հարմարեցումներ: Այսպես, բայի սեռը դժվարամարս թեմա է: Ինչո՞ւ: Որովհետև այն զուտ տեսական հարց է և ձևաբանական մակարդակում շատ բայերի սեռը որոշելը հեշտ չէ: Այնինչ բայի խնդրառությունը, որ խիստ գործնական հարց է, գրեթե անտեսված է: Ուրեմն բայի սեռը ձևաբանության մեջ պետք է անցնել թուուցիկ, ընդհանուր ծանոթության կարգով, նրան անդրադառնալ շարահյուսության բաժնում՝ այն քննելով խնդիրների հետ կապված:

2. Կան լեզվի գործնական ուսուցման վերաբերող այնպիսի ընդհանուր ձևեր, մեթոդներ ու եղանակներ, որոնք այս կամ այն չափով կիրառելի են գրեթե բոլոր թեմաներն անցնելիս: Դրանցից մեկը սովորողներին սահմանումների ձևակերպմանը մասնակից դարձնելն է: Սովորողի ձեռքերած յուրաքանչյուր գիտելիք կլինի գործնականում կիրառելի, եթե նա այն ձեռք է բերել հասկանալով: Աշակերտներն

իրենք պետք է կարողանան ձևակերպել կանոնները, սահմանումները: Իսկ դա կարող են անել, որովհետև որևէ հասկացություն սահմանել նշանակում է թվարկել այդ հասկացության էական, հիմնական հատկանիշները:

Աշակերտների մտածողության զարգացումը լեզվի գործնական ուսուցման պայմաններից մեկն է:

Ինչպե՞ս ապահովել, ասենք, հնչյունաբանության գործնական ուսուցումը:
Հնչյունաբանություն- Հնչյունի սահմանումը, հնչյունների դասակարգումը, ձայնավոր և բաղաձայն, վերջիններս՝ ձայնեղ, խուլ և հնչեղ խուլ անմիջական գործնական արժեք չունեն, սակայն սրանց ուսուցումն անհրաժեշտ է հաջորդ՝ շեշտ, հնչյունափոխություն, վանկ, տողադարձ, այնուհետև ուղղախոսության և ուղղագրության գործնական արժեք ունեցող թեմաների ուսուցման համար:

1. Ուսուցիչը նախ պետք է բացատրի, որ հնչյունափոխությունը պիտի սովորել հերթականությամբ, հետևյալ պլանով.

ա. Հնչյունափոխության պատճառը, այն է՝ շեշտի տեղափոխությունը:

բ. Հնչյունի դիրքը բառի մեջ. 1. բառասկիզբ, 2. Բառամեջ (բաց վանկ) – յուրաքանչյուր ձայնավորի հնչյունափոխություն պետք է բացատրել այս հերթականությամբ:

- Այնուհետ պետք է պարզել, թե երբ է տեղի ունենում հնչյունափոխություն՝

ա) երբ կուտակվում է շեշտի տեղափոխությունը, իսկ սա ե՞րբ է տեղի ունենում -երբ բառը վերջից աճում է, նոր վանկ է ավելանում, իսկ սա ավելի հաճախ լինում է՝ - բառակազմություն, ապա՝ հոլովման ավելի քիչ՝ գոյականի հոգնակիի կազմության և Աշակերտները, իմանալով ընդհանուր կանոնը, նույն բառը հնչյունափոխում են նշված 3 կանոններով:

Ժողովուրդ- ու ձայնավորը հնչյունափոխվում է բառակազմության և հոլովման և ժողովրդական, ժողովրդասեր, ժողովրդի, ժողովրդից և այլն:

Մխալմամբ հնչյունափոխում են նաև հոգնակիի կազմության և՝ ժողովուրդներ: Լինում է նաև հակառակը՝ բառը չեն հնչյունափոխում նաև բառակազմության և հոլովման և՝ ժողովրդական, ժողովուրդի:

Ի՞նչ անել, գործնական աշխատանքի ուսուցման ի՞նչ ձև ընտրել:

- Մտեղծել, ունենալ երևույթը պատկերող աղյուսակ:

Ուսուցիչը աղյուսակում եղած բառերը նախապես թելադրում է աշակերտներին և պահանջում դրանք հոլովել, հոգնակին կազմել և տրված բառից նոր բառ կազմել: Երբ ավարտվում են առաջադրանքի կատարումը, աղյուսակը կախում են գրաձևերը, ուղղում սխալները, բացատրում և համոզվում, որ բոլոր դեպքերում չէ, որ բառը կարող է հնչյունափոխվել:

Բառը	Հոգնակին	Հոլովումը	Բառակազմություն
Ծես	Ծեսեր	Ծեսի	Ծիսակատարություն
Խումբ	Խմբեր	Խմբի	Խմբական
Հրավեր	Հրավերներ	Հրավերի	Հրավիրել
Իղձ	Իղձեր	Իղձի	Ըղձական
Խնամի	Խնամիներ	Խնամու	Խնամություն
Գինի	Գինիներ	Գինու	Գինեգործ
Գիր	Գրեր	Գրի	Գրական
Նկարիչ	Նկարիչներ	Նկարչի	Նկարչություն
Անիվ	Անիվներ	Անիվի	Անվավեր
Հաշիվ	Հաշիվներ	Հաշվի	Հաշվապահ
Տունկ	Տունկեր	Տունկի	Տնկել
Կամուրջ	Կամուրջներ	Կամուրջի (կամրջի)	Կամրջակ

Խնամի – խնամու – սա սովորական հնչյունափոխական երևույթ չէ:

Լեզվի գործնական ուսուցումը ապահովում է գծապատկերների, աղյուսակների միջոցով:

Գծապատկեր — լեզվական վերացական-տեսական երևույթը դառնում է շոշափելի, տեսանելի, առարկայական:

Աղյուսակ — համակարգվածություն, օրինաչափություն, տրամաբանական կապի, ընդհանրության արտահայտում, նշում:

Դասագրքերի վարժությունները ուսուցիչների կողմից առաջադրվող հարց-առաջադրանքները ավելի շատ ճանաչողական են, քան գործնական-կիրառական:

Գործնական աշխատանք բառագիտությունից՝

Նպատակը՝ աշակերտին տալ բառագտագործման հմտություն:

Հիմնական դպրոց – բառապաշարի հարստացում:

Միջնակարգ դպրոց – բառի տեղին և ոճականորեն ճիշտ գործածություն:

Բառային աշխատանքը կատարվում է միօրինակ և միակողմանի, այդ պատճառով էլ դառնում է ինքնանպատակ և ձևական, սրա պարզ օրինակը հոմանիշ բառերի ուսուցումն է: Ներկայացվող աշխատանքը հիմնականում 2 տիպի է՝

ա) լրացնել հոմանիշային շարքը

բ) բառը փոխարինել մեկ այլ հոմանիշ բառով, սակայն գրեթե չենք տալիս այսպիսի առաջադրանք. զանազանել, գտնել, ցույց տալ այն դեպքերը, երբ հոմանիշ բառերը նույն նախադասության մեջ կամ տարբեր տեղերում հնարավոր չէ փոխարինել մեկը մյուսով (հիշել Տերյանի օրինակը)՝ Լինեի չորֆան սարերում հեռու... և Հովիվներն այնտեղ կրակ են արել...

Բառարանից օգտվելը – գործնական աշխատանքի օրինակ է:

Գրականություն – հիմնական դպրոց

-Բնագրային աշխատանք

-Գրել գրական հերոսների անունները և յուրաքանչյուրի դիմաց՝ նրան բնորոշ հատկանիշները:

-Ուսուցիչը թելադրում է մարդուն բնորոշ հատկություններ և պահանջում հերոսին բնութագրելու և դրանցից ընտրել համապատասխան բառեր:

Ասում ենք՝ խիստ գործնական մարդ է (նաև գործունյա), այսինքն՝ պրակտիկ, կատարող:

Չուտ գործնական նշանակություն ունեցող թեմաներ

Շեշտ, հնչյունափոխություն, տողադարձ, ուղղախոսության, ուղղագրության, բայի խնդրառության, գործնական գրության ձևերը...

Նախ պարզենք, թե ի՞նչ ենք հասկանում գործնական աշխատանք ասելով.

-Միանշանակ պատասխան չկա

-բայց՝ գործնական գրության ձևերը՝ նամակ, դիմում, արձանագրություն, հարցազրույց...

-գործնական աշխատանք պայմանականորեն կնշանակի՝ տեսական գիտելիքի գործնական կիրառում:

Լեզվական խաղեր

Գրակ. – խաչբառեր, բնագրային աշխատանք

ՆԱԽԱԳԻԾ

Նախագիծը ուսումնական գործունեություն է, որի ընթացքում համակցվում են տեսական և գործնական գիտելիքները, և ուսումնառության ընթացքում ձեռք բերված փորձն ու գիտելիքը կիրառվում են պրակտիկ գործողությունների մեջ՝ իրագործելու որևէ գործնական գաղափար կամ խնդիր:

Բարդ, հիմնականում առօրյա կյանքին առնչվող խնդիր, խնդիրն ուսումնասիրելուն վերաբերող նպատակների և առաջադրանքների սահմանում, աշխատանքային գործընթացի կազմակերպում և արդյունքների կանխատեսում, արդյունքների ներկայացում.

Մանկավարժական նախագծային մեթոդն ուսման հատուկ եղանակ է, որը կենտրոնանում է որևէ խնդրի շուրջ:

Առաջադրանքը ոչ միայն խնդիրը լուծելը կամ այն ընտրելն է, այլև դրան իրական կյանքում սերտորեն փոխկապակցված հնարավորինս շատ հայեցակետեր բացահայտելն է: Յուրաքանչյուր նախագիծ յուրօրինակ և անվերջ է, քանի որ խնդիրները վերացական հասկացություններ չեն, այլ վերցված են իրականությունից:

Չկա երկու նմանատիպ նախագիծ, քանի որ մասնակից աշակերտները, ուսուցիչները և հանգամանքները մշտապես տարբեր են:

Նախագծային մեթոդը պահանջում է աշակերտների աշխատանքի գիտակցված ծրագրում: Ծրագրումը կատարվում է երկու տարբեր մակարդակներով: Առաջին մակարդակը վերաբերում է ամբողջ գործընթացին, որի ընթացքում նախատեսվում է, որ աշակերտին կներկայացվեն որոշակի գիտելիքներ և կզարգացվեն որոշակի կարողություններ: Երկրորդ մակարդակը ենթադրում է անհատական նախագծերի

ծրագրում, որի համար անհրաժեշտ է ուսուցչի կողմից շահագրգռվածություն և օժանդակության ցուցաբերում:

Անհրաժեշտ է նշել, որ այս դեպքում խոսքի հմտությունները գերիշխող չեն, և տարբեր տարողություններ ունեցող աշակերտներ հավասարապես մասնակցում են համատեղ ընտրված խնդրի լուծմանը:

Թեև ուսուցիչները և աշակերտները շարունակում են տարբեր դերակատարում ունենալ, այս մեթոդի աշխատանքների իրականացման համագործակցային բնույթն ապահովվում է նրանով, որ ուսուցչի ղեկավարման դերն աննշան է, նա գործում է գրեթե աննկատ, իսկ համագործակցությունն իրականացվում է միայն համատեղ պլանավորման, գործողությունների և գնահատման միջոցով:

Առաջադրանքների բազմազանությունն աշակերտներին հնարավորություն է տալիս դրանց մասնակցելու տարբեր ձևերով: Աշակերտները կարող են աշխատանքի իրենց բաժինն ընտրել ըստ իրենց նախկին փորձի, ունակությունների և հավակնությունների առանց ուսուցչի կողմից որևէ մեթոդաբանության կիրառման:

Այս նախագծային մեթոդն առաջարկում է ավելին, քան ավանդական կրթության և դպրոցի շրջանակը: Այն կենտրոնանում է առօրյա կյանքի խնդիրների վրա և կարևորում մասնակիցների փորձառությունը:

Նախագծի աշխատանքային գործընթացը

ա) թեմաներ ընտրելը և դրանք քննարկելը,

բ) ենթաթեմաներ ընտրելը և հանձնարարելը (կազմակերպվում է ուսուցչի կողմից կամ ընդհանուր համաձայնությամբ),

գ) հաղորդակցման ուղիներ ընտրելը (էլ. փոստ, ֆորում),

դ) հաղորդակցման ռազմավարություն մշակելը (տեղեկությունների փոխանցման պարբերականությունը, աշակերտներին հանձնարարված մասերի վերաբերյալ զեկույցների ստուգման վերջնաժամկետները),

ե) խմբերում փոքր թեմաները քննարկելը և ներկայացնելը,

զ) ներկայացումներն ըստ խմբերի պատրաստելը, փոքր թեմաների մասին զեկույցներն «իրար միացնելը»,

է) խմբերի ներկայացումները,

ը) դիտողությունները, գնահատումը.

-*գնահատում խմբերում՝* աշակերտներին հանձնարարված թեմայի մասերը,

-*գնահատումը դասարանում՝* խմբերի ներկայացումների գնահատումը:

Ավանդական և կառուցողական մանկավարժության համեմատություն

Անձնական գործոնը

Ուսուցչի տեսակետը

Անհրաժեշտ է, որ ուսուցիչը գիտակցի համագործակցության և տարբերակման կարևորությունը:

- **Կազմակերպման եղանակների բովանդակության իմացությունը**

Այս տարբեր մեթոդները կարող են հաջողությամբ կիրառվել միայն այն ուսուցիչների կողմից, ովքեր ծանոթ են տվյալ հասկացություններին, դրանց կիրառման կանոններին, առավելություններին և հնարավոր դժվարություններին, և ովքեր պատրաստ են լուծելու այն խնդիրները, որոնք կարող են ծագել ուսուցման գործընթացում :

- **Վերաբերմունքը**

Ուսուցիչը չպետք է լինի «բոլոր տեղեկությունների և գիտելիքի աղբյուր», նա պետք է մնա գրեթե աննկատ և ղեկավարի աշակերտների աշխատանքն անուղղակի կերպով: Աշխատանքի համագործակցային կամ տարբերակված բնույթը չպետք է դժվարություն ներկայացնի կամ հոգնեցուցիչ լինի ուսուցչի համար: Դասավանդման այս եղանակը կարող է արդյունավետ լինել միայն այն դեպքում, երբ ուսուցիչը կարողանում է հետամուտ լինել դրան և իրագործել ուսման այս բազմամակարդակ գործընթացը:

- **Դասավանդման փորձը**

Ուսուցչի գիտելիքների «հարմարեցումը» աշակերտների հմտություններին մեծ փորձառություն և տեսական գիտելիքներ է պահանջում:

ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄԵԹՈԴԸ

Նախագծերի մեթոդը որևէ հիմնախնդրի մանրամասն մշակմամբ ուսուցման նպատակներին հասնելու եղանակ է, մշակումը պետք է ավարտվի շոշափելի պրակտիկ արդյունքով: Այն որոշակի հաջորդականությամբ իրականացվող հնարների, գործողությունների համախումբ է, միտված դրված նպատակի իրականացմանը:

Նախագծերի մեթոդը ուսուցման այնպիսի եղանակ է, որի դեպքում սովորողն անմիջականորեն ներառվում է ակտիվ իմացական գործընթացների մեջ, նա ինքնուրույնաբար ձևակերպում է իր խնդիրը, իրականացնում է անհրաժեշտ տեղեկության հավաքագրում, պլանավորում է խնդրի լուծման տարբերակներ, եզրակացություններ է անում, վերլուծում է սեփական գործունեությունը և արդյունքում ձեռք բերում նոր գիտելիքներ ու կենսափորձ: Մեթոդը կարելի է կիրառել ուսուցման ցանկացած փուլում, տարբեր տարիքային խմբերում: Այն հարմար է բոլոր ուսումնական առարկաներն ուսումնասիրելիս և նշված պատճառներով այն համապիտանի մեթոդ է:

Մանկավարժության մեջ նախագծերի մեթոդը ստեղծվել է 20-րդ դարի սկզբին: Այն կոչվել է նաև պրոբլեմների մեթոդ և կապված է ամերիկացի փիլիսոփա և մանկավարժ Ջոն Դյուիի գաղափարների հետ: Վերջինս գտնում էր որ, դպրոցը պետք է կազմակերպի սովորողների ակտիվ և նպատակամետ ուսումնական գործունեություն, հաշվի առնելով նրանց անհատական հետաքրքրությունները: Երեխաները պետք է գիտակցեն, որ իրենց ձեռք բերած գիտելիքները պետք են գալու կյանքում: Այս բանը նրանց հասկանալի դարձնելու համար պետք է լուծվելիք պրոբլեմներն ընտրել իրական կյանքից, այնպիսիք, որոնք ծանոթ են երեխաներին և նշանակություն ունեն նրանց համար:

Դյուին պնդում էր, որ երեխայի կյանքը ապագա կյանքի նախապատրաստություն չէ, այլ լիարժեք կյանք : Նա ասում էր կրթությունը չպետք է տա այնպիսի գիտելիքներ, որոնք հետագայում են նրան պետք գալու, այլ տա այնպիսի գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են երեխային այսօր: Միշտ պետք է հաշվի առնել երեխայի հետաքրքրություններն ու պահանջմունքները: Երեխայի անհատական փորձի կուտակումը կնպաստի նրա անձի ձևավորմանը: Դրա համար

էլ ուսուցումը պետք է հանգի երեխայի խաղային ու աշխատանքային գործունեության: Իմացության նման ճանապարհն ավելի է համապատասխանում երեխայի բնությանը, քան թե գիտելիքների համակարգի ավանդական հաղորդումը: Կրթական պրոցեսի նպատակ է դառնում կենսական խնդիրների լուծումը, ստեղծագործական որակների տիրապետումն ու կենսափորձի ձեռքբերումը:

Նախագծերի մեթոդն այսօր որոշակի փոփոխություններ է կրել և որոշ չափով հեռացել է Դյուիի պրագմատիկ մոտեցումից, սակայն էությունը մնացել է նույնը, խթանել սովորողների հետաքրքրությունը որոշակի պրոբլեմների հանդեպ և նախագծային գործունեությամբ լուծել այդ պրոբլեմները, ձևավորել պրակտիկայում գիտելիքները կիրառելու կարողություններ, զարգացնել քննադատական մտածողությունը:

Դյուիի գաղափարները լայն տարածում գտան ԱՄՆ-ում և եվրոպական երկրներում: Գրավիչն այստեղ այն էր, որ մեթոդը զուգակցում էր տեսական գիտելիքները նրանց պրակտիկ կիրառության հետ, բացի այդ, ապահովում էր սովորողների համատեղ գործունեությունը: Նախագծային գործունեության մեջ ներգրավված աշակերտը հասկանում է ինչ խնդիր է լուծում և դրա համար ինչ գիտելիքներ են իրեն անհրաժեշտ, աշխատանքային պրոցեսում նա հասկանում է նաև որտեղ և ինչպես պիտի կիրառի իր ձեռք բերած գիտելիքները: Սա այն է, ինչ նախորդ դասախոսության մեջ մենք անվանեցինք գիտելիքների իմաստավորված յուրացում:

Նախագծերի մեթոդը միշտ ենթադրում է ինչ որ հիմնախնդրի լուծում: Այն մի կողմից ենթադրում է ուսուցման տարբեր միջոցների ու մեթոդների կիրառում, մյուս կողմից ` տարբեր բնագավառներից ձեռք բերած գիտելիքների ստեղծագործական կիրառում, ասել է թե՛ միջառարկայական գիտելիքների ու կապերի ակտիվ օգտագործում: Նախագծերի մեթոդը պահանջում է նաև, որ իրականացված հետազոտության արդյունքները շոշափելի լինեն, այսինքն՝ ստացվի կոնկրետ տեսական կամ էմպիրիկ արդյունք, որ կարող է օգտագործվել իրականության որևէ բնագավառում:

Ուսուցման այս տեխնոլոգիան, սակայն, զերծ չէ թերություններից : Համաշխարհային և հատկապես Խորհրդային միության փորձը ցույց է տվել, որ այն

հնարավորություն չի տալիս սովորողներին համակարգված գիտելիքներ ձեռք բերել կոնկրետ առարկաներից: Հենց այս պատճառով էր, որ Խորհրդային միությունում այն առանձնապես չկարևորվեց ու համարյա թե մոռացության մատնվեց: Այս պարագան պետք է նկատի ունենալ և նախագծերի մեթոդը չդիտել որպես այլընտրանք ուսուցման մնացյալ մեթոդների: Այն ընդամենը սովորողներին անհրաժեշտ մի շարք ինտելեկտուալ ու անձնային որակներ ձևավորող ու զարգացնող լրացուցիչ մեթոդ է:

Նախագծային գործունեությունը դուրս է գալիս ուսումնական առարկայի սահմաններից և ընդգրկում է շրջակա աշխարհի այն ոլորտները, որոնք առավել հետաքրքրություն են ներկայացնում սովորողին: Մեթոդի հիմնական նպատակն է սովորողներին հնարավորություն տալ պրակտիկ խնդիրների կամ պրոբլեմների լուծման պրոցեսում ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ: Ուսուցչին այս գործում հատկացվում է նախագիծը մշակողի, կոորդինատորի, խորհրդատուի և փորձագետի դերերը:

Մեթոդի հիմքում ընկած է սովորողների իմացական կարողությունների զարգացումը, ձևավորել իրենց գիտելիքները ինքնուրույն կառուցելու կարողություններ, տեղեկատվական հոսքերում կողմնորոշվել, զարգացնել քննադատական և ստեղծագործական մտածողությունը: Ձևավորվում են նաև ինքնավերլուծության և հետազոտական կարողություններ, համագործակցային աշխատանքի և կառավարման հմտություններ, հաղորդակցական որակներ և վերջապես, սեփական աշխատանքը ներկայացնելու կարողություններ:

Նախագծերը կարող են լինել անհատական, խմբային, տեղական և հեռահաղորդակցական: Վերջին դեպքում աշխատանքը կազմակերպվում է համացանցի միջոցով:

Նախագծերի մեթոդն իր բնույթով շատ մոտ է գիտնականի գիտահետազոտական գործունեությանը: Այն ևս ենթադրում է գործողությունների հաջորդական շարք:

Հիմնախնդրի և նրանից բխող հետազոտական խնդիրների որոշում: Կարելի է իրականացնել «մտքերի տարափի» կամ «կլոր սեղանի», մինի սեմինարի կազմակերպմամբ:

Հիմնախնդրի լուծման վարկածի առաջադրում:

Հետազոտության մեթոդի ընտրություն՝ փորձ, դիտում, վիճակագրական տվյալների հավաքում և այլն:

Վերջնական արդյունքների ձևավորման եղանակների մշակում՝ շնորհանդես, պաշտպանություն, հաշվետվություն և այլն:

Ստացված տվյալների հավաքում, համակարգում ու վերլուծություն:

Արդյունքների ամփոփում, ձևակերպում և դրանց ներկայացում:

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Սկսել թեմայի ընտրությունից, նրա տիպից ու սովորողների քանակից:

Նշված թեմայում ուսուցիչը պետք է մտածի հնարավոր պրոբլեմները և օգնի սովորողներին ձևակերպելու դրանք:

Խնդիրները բաշխի ըստ խմբերի, քննարկի հետազոտման հնարավոր մեթոդների հարցը, տեղեկույթի որոնման, ստեղծագործական լուծումների հարցերը:

Ապահովի նախագծի մասնակիցների ինքնուրույն կամ խմբային աշխատանքը: Իրականացնի ստացված տվյալների միջանկյալ քննարկումներ դասերի ժամանակ, կամ գրադարանում:

Կազմակերպի նախագծի պաշտպանությունը, ընդդիմախոսությունը:

Կազմակերպի կոլեկտիվ քննարկում, փորձաքննություն, արտաքին գնահատման արդյունքներ, եզրակացություններ:

ՆԱԽԱԳԾԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Նախագիծը կարելի է գնահատել հետևյալ պարամետրերով.

Առաջադրված պրոբլեմների արդիականությունն ու կարևորությունը, ուսումնասիրվող թեմային նրանց համապատասխանությունը,

օգտագործվող հետազոտական մեթոդների և ստացված արդյունքների մշակման մեթոդների ճիշտ ընտրությունը,

մասնակիցների ակտիվությունը, համապատասխան իրենց անհատական հնարավորություններին,

կայացվող վճիռների կոլեկտիվ բնույթը,

հաղորդակցության և փոխօգնության բնույթը,

պրոբլեմի մեջ թափանցելու անհրաժեշտ և բավարար խորությունը, միջառարկայական գիտելիքների օգտագործումը,

իրականացրած լուծումների ապացուցելիությունը, սեփական եզրակացությունները փաստարկելու կարողությունը,

իրականացված նախագծի արդյունքների ձևավորման գեղագիտական կողմը:

Նախագծային աշխատանքները լավ հնարավորություն են տալիս վերահսկել սովորողների վարքն ու մտավոր գործունեությունը, բազմակողմանիորեն ճանաչել նրանց, քանի որ հաջողված ինքնուրույն ստեղծագործական որոնումը գիտելիքների խոր յուրացման և անձի ստեղծագործական զարգացման ցուցանիշ է: Այստեղ գիտելիքները դրսևորվում են ոչ ստանդարտ, նոր իրադրություններում և սովորողներն օգտագործում են տարբեր կրթական բնագավառներից իրենց ձեռք բերած գիտելիքները: Նման գործունեության մեջ դրսևորվում է ուսումնական աշխատանքի հանդեպ սովորողների անձնային վերաբերմունքի մակարդակը, դրսևորվում են թիմով աշխատելու կարողությունները, աշխատանքի որակի համար իր վրա պատասխանատվություն վերցնելու կամքը: Երեխաները դրսևորում են նախաձեռնություն և ինքնուրույնություն, նրանք սկսում են կայանալ որպես անձ, ընդունակ կյանքում ակտիվ գործունեության:

Նախագծերի մեթոդի հիմքում ընկած է սովորողների իմացական կարողությունների զարգացումը, ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու և գործնականում օգտագործելու, տեղեկատվական տարածության մեջ կողմնորոշվելու և ստացած տեղեկույթը քննադատորեն իմաստավորելու կարողությունները: Մեթոդն ունի պրագմատիկ ուղղվածություն դեպի արդյունքը, որը պիտի ստացվի այս կամ այն տեսական կամ գործնական բնույթի պրոբլեմի լուծումից:

Նախագծի թեմաներն ընտրելիս պետք է հաշվի առնել, թե ինչքան կլինի սովորողների լրացուցիչ բեռնվածությունը, չի^օ հանգեցնի այն ընդհանուր ուսումնական գործընթացի խախտմանը: Պետք է նախապես գնահատել նաև առկա նյութական և տեղեկատվական ռեսուրսները: Թեմաները հնարավորինս պետք է համապատասխանեն ուսումնական գործընթացի պրոֆիլին: Նաև պետք է հաշվի առնել իրականացնողների ինտելեկտուալ, հոգեբանական և տեխնիկական հնարավորությունները:

Այսինքն՝ ընտրվում է պրոբլեմային տիրույթը, դրվում է խնդիր, որոշվում է ստեղծվող արդյունքի վերջնական տեսքը, նրա ուսումնական նշանակությունը և պոտենցիալ օգտագործողները, ձևավորվում է նախագծողների կազմը, բաշխվում են պարտականությունները՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի հնարավորությունները: Այնուհետև կատարվում է նախագծի բովանդակության ընտրություն, գնահատվում է մոտավոր ծավալը, մանրամասնվում է այն, ճշգրտվում է յուրաքանչյուր մասնակցի դերը, իրականացման ժամկետը, որոշվում են նյութական անհրաժեշտ ծախսերը:

ՆԱԽԱԳԾԻ ԹԵՄԱՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Թեման կարող է առաջադրել ուսուցիչը, հաշվի առնելով իր առարկայի հետ կապված ուսումնական իրադրությունը, սովորողների հետաքրքրություններն ու ուսումնական հնարավորությունները: Կարող են առաջադրել նաև իրենք աշակերտները՝ համապատասխան իրենց հետաքրքրություններին ու ստեղծագործական ձգտումներին: Կարող է նաև ուսուցիչն առաջարկել մի շարք թեմաներ, սովորողներին հնարավորություն տալով ազատ ընտրություն կատարել: Թեման կարող է լինել առարկայական ծրագրի ինչ-որ տեսական հարց: Կարող է ունենալ պրակտիկ ուղղվածություն, ասենք, շրջակա միջավայրի աղտոտվածության, էկոլոգիական անվտանգության, գլոբալ տաքացման, խմելու ջրի և նմանատիպ խնդիրների հետ կապված հարցեր:

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Նախապատրաստական կամ մոտիվացման փուլ: Ուսուցիչը ներկայացնում է իր մտահղացումը, ստեղծում է դրական մոտիվացիոն տրամադրություն: Սովորողները քննարկում են այն, առաջարկում իրենց գաղափարները:

1. Նախագծի նպատակների ու խնդիրների ընտրության փուլ: Նախքան գործունեության անցնելը ուսուցիչը պետք է պարզաբանի մի քանի հարցեր. Ի՞նչ նպատակ է հետապնդում նախագիծը, ինչո՞վ է պայմանավորված նրա ստեղծման անհրաժեշտությունը, հետագայում ինչպե՞ս կարող է օգտագործվել այն:

Այս հարցերի պատասխանները կօգնեն աշակերտներին ձևակերպել նախագծի նպատակը:

2. Լուծման ենթակա ընդհանուր բնույթի խնդիրների քննարկում ու ձևակերպում: Նախագծերի մեծամասնության համար տիպական են հետևյալ խնդիրները. նախագծի կատարման համար անհրաժեշտ տեղեկույթի հավաքագրում և ուսումնասիրում նախագծի հետ կապված հիմնախնդրի վերլուծություն նախագծի նյութատեխնիկական ապահովման հարցեր

Ֆինանսավորման աղբյուրների որոնում:

Պրոբլեմի վերածումը ենթախնդիրների, տարբեր խմբերին հանձնարարականներ՝ պարտականությունների բաշխում:

Ուսուցիչն աշակերտների հետ համատեղ իրենց ընդհանուր խնդիրը բաժանում են մասերի՝ ենթախնդիրների և ամեն մի ենթախումբ վերցնում է մի ենթախնդիր: Ենթախմբերն իրենց աշխատանքը կատարելուց հետո համատեղ վերլուծում են իրենց արդյունքները, հայտնաբերում են թերությունները, ուղղում դրանք և պատրաստվում շնորհանդեսին:

Աշխատանք նախագծի վրա

Ամփոփում, արդյունքների ձևակերպում

Նախագծի ներկայացում-շնորհանդես:

Ստացված արդյունքները կարելի է ներկայացնել կամ էլեկտրոնային տեսքով, կամ սովորական զեկուցման՝ պլակատներով ու լուսանկարներով: Եթե նախագծի իրականացման արդյունքում ստեղծվել է ինչ-որ սարք, ապա պետք է ցուցադրվի այն և նրա աշխատանքը: Ցանկալի է, որ շնորհանդեսին մասնակցեն բոլոր մասնակիցները և ակտիվորեն ներգրավվեն բանավեճերում, հարց ու պատասխաններում և այլն:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Գործնական աշխատանքի արդյունավետությունը պետք է դիտարկել գործնական աշխատանքի և գործունեության անհրաժեշտության պատճառների տեսանկյունից:

Գործնական աշխատանքը դասավանդման և ուսուցման անբաժանելի մաս է: Նպատակը աշակերտների մեջ գործնական հմտություններ զարգացնելն է:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ընդհանուր առմամբ ուսումնական նյութի յուրացման ամենամեծ արդյունավետությունը կապված է գործնական հմտությունների մակարդակի հասնելու հետ և կազմում է մոտ 90%, մինչդեռ տեսողական մեթոդների կիրառման դեպքում ուսանողները սովորում են 50%-ից պակաս, իսկ բանավոր մեթոդների կիրառման դեպքում՝ 10%:

Գործնական աշխատանքը ընթացիկ գնահատման արդյունավետ տեսակներից է՝ հանրակրթության պետական նոր չափորոշչով սահմանված 8 առանցքային կարողունակությունների զարգացումն ապահովելու համար:

Գործնական աշխատանքը ուսումնասիրություն է, որը բաղկացած է մի շարք գործողություններից, որոնք լրացնում են ուսումնական գործընթացը: Գործնական աշխատանքը պետք է ներառի գիտական այցեր, հարցումներ, շնորհանդեսներ, դերային խաղեր, մոդելավորում, SZS-ի օգտագործում, խմբային քննարկում: Այս գործողությունները կարևոր դեր են խաղում ուսուցման մեջ, այն է՝ ձևավորում են գիտական հասկացություններ:

Գործնական աշխատանքի հիմնական տեսակներն են՝

- հետազոտություն
- վարժություններ
- լաբորատոր աշխատանք,
- խմբային տեխնոլոգիաներ

Այս գործողությունները զարգացնում են գործնական հմտություններ և օգնում են գիտական հասկացությունների և երևույթների ըմբռնման ձևավորմանը: Լաբորատոր և գործնական աշխատանքը թույլ է տալիս սովորել քննադատաբար մտածել, ինքնուրույն եզրակացություններ անել՝ չհիմնվելով ուսուցչի կամ գործընկերոջ կարծիքի վրա: Սա հուշում է, որ սովորողը փորձում է մտածել իրեն շրջապատող երևույթներից անկախ: Սա շատ օգտակար հմտություն է, որը ոչ բոլոր մեծահասակներն ունեն:

Բացի այդ, այս տեսակի աշխատանքը թույլ է տալիս երեխաներին սովորել, թե ինչպես կառավարել տարբեր սարքեր և սարքավորումներ: Սա շատ կարևոր է նրանց

համար, ովքեր ցանկանում են իրենց մասնագիտական գործունեությունը կապել ընտրված ոլորտի հետ: Նրանք հստակ պատկերացում կունենան, թե ինչ է իրենց սպասվում և ինչպես են կառուցվելու աշխատանքները: Գործնական աշխատանքի ամենամեծ առավելությունն այն է, որ աշակերտները ձեռք են բերում նոր փորձ, որը նրանք կարող են օգտագործել ապագայում խնդիրներ լուծելիս և համեմատել արդյունքները:

Կառուցվածք

Գործնական աշխատանքը ենթադրում է հստակ կառուցվածք, որն ունեն գործնական վարժությունները կրթության ցանկացած փուլում: Բայց որքան մեծանում է աշակերտը, այնքան դասի կառուցվածքն ավելի բարդ և բազմակողմ է դառնում: Կառուցվածքային հիմնական տարրերն են.

- Դասի թեմայի և նպատակի ներկայացում.
- Ուսուցչի կողմից տեսական բազայի ստուգում, որն անհրաժեշտ է սարքավորումներով սովորողների բնականոն աշխատանքի և փորձեր կատարելու համար.
- Գործողությունների սխեմայի և հաջորդականության կազմում
- Անհրաժեշտության դեպքում ամբողջական ձեպագրույց աշխատանքի կատարման վերաբերյալ:
- Փորձի անցկացում.
- Արդյունքների գրանցում, համակարգում և վերլուծություն:
- Գնահատում

Գործնական աշխատանքի արդյունավետությունը կախված է ոչ միայն սովորողներից, այլև ուսուցչից: Որքան ճշգրիտ կներկայացվի աշխատանքի նպատակները, որքան մատչելի և պարզ լեզվով կբացատրվի բոլոր գործողությունների իմաստը, այնքան արդյունավետ կլինի աշխատանքը:

Գործնական աշխատանքը կարող է լինել ուսուցում և թեստավորում, անհատական և խմբակային, կարող է իրականացվել սովորական դասի կամ խաղի ձևով:

Գործնական աշխատանքի ընթացքում պետք է օգտագործվեն ու սովորողներին հասանելի հետազոտական մեթոդներ, ինչպիսիք են **հարցադրումը, վերլուծությունը,**

դիտարկումը, ընդհանրացումը, համեմատությունը, թեմատիկ գրականությունից տեղեկատվության հավաքագրումը:

Ինչու՞ է դա կարևոր: Դասավանդման մեջ գործնական մեթոդ կիրառելիս ուսուցիչ աշակերտ հարաբերություններն արմատապես փոխվում են.

- սովորողը որոշում է գործունեության նպատակը, և ուսուցիչը օգնում է նրան դրանում.
- դասավանդումը բացում է նոր գիտելիքներ, ուսուցիչը խորհուրդ է տալիս գիտելիքների աղբյուրներ.
- սովորողը փորձարկում է, ուսուցիչը օգնում է կազմակերպել ճանաչողական գործունեությունը.
- սովորողը ակտիվ է, ուսուցիչը պայմաններ է ստեղծում գործունեության դրսևորման համար.
- սովորողը ուսուցման առարկա է, ուսուցիչը՝ գործընկեր;
- սովորողը պատասխանատու է իր գործունեության արդյունքների համար, ուսուցիչը օգնում է գնահատել արդյունքները և գտնել գործունեությունը բարելավելու ուղիներ:

Գործնական աշխատանքը ամենակարևոր փուլը սովորողի եզրակացությունն է կամ հետազոտական դատողությունը: Սովորողները նախապես ընտրում են անհրաժեշտ գրականությունը, ուսումնասիրում են թեմատիկ նյութեր, իրականացնում մի շարք միջոցառումներ, այդ թվում՝ ներգրավելով այլ սովորողների, դիմում գիտելիքի տարբեր ոլորտների մասնագետների, ովքեր իրենց փորձը կիսում են նրանց հետ: Կարևոր է նաև հնարավորություն ընձեռել հետազոտողներին կիսվել իրենց աշխատանքով այլ սովորողների հետ: Այդ նպատակով ուսուցիչները պետք է անցկացնեն գիտաժողովներ, փառատոններ, կլոր սեղաններ:

Գնահատում

Գործնական աշխատանքը գնահատելու համար օգտագործվում են հետևյալ հիմնական չափանիշները՝

- խմբում արդյունավետ աշխատելու կարողություն.
- Գործնական աշխատանք կատարելիս անվտանգության կանոնների պահպանում

- Համատեղ գործունեության մեջ գործառույթներ և դերեր բաշխելու ունակություն,
- համատեղ աշխատանքում փոխադարձ վերահսկողություն իրականացնելու ունակություն
- հետազոտական դատողության ունակություն

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

Նախագիծն ուսուցում է կատարելու միջոցով:

Ջ. Դյուի

«Նախագիծ» (project) բառը ֆրանսերենից թարգմանաբար նշանակում է «դեպի առաջ», «ճանապարհ դեպի նպատակ»: «Նախագիծ» հասկացությունը լայն առումով ընկալվում է որպես ինչ-որ մտահղացում, պլանավորում: Նախագծային ուսուցման տեխնոլոգիան ծագել է 20-րդ դարի 20-ական թվականներին, նրա հիմնական գաղափարները մշակել են Ջոն Դյուին և նրա աշակերտ Ուիլյամ Կիլպատրիկը: Դյուին գտնում էր, որ դպրոցը պետք է սովորողների համար կազմակերպի ակտիվ ու նպատակամետ ուսումնական գործունեություն՝ հաշվի առնելով նրանց անհատական հետաքրքրությունները: Երեխաները պետք է գիտակցեն, որ իրենց ձեռք բերած գիտելիքները պետք են գալու կյանքում: Այդ պատճառով պետք է լուծվելիք խնդիրներն ընտրվեն իրական կյանքից այնպիսիք, որ ծանոթ են սովորողներին և նշանակություն ունեն նրանց համար:

Հայտնի է, որ համաձայն Հանրակրթության պետական չափորոշի՝ յուրաքանչյուր սովորող ուսումնական տարվա ընթացքում պետք է իրականացնի մի քանի Նախագծեր: Սա նպատակ ունի սովորողների մոտ մի շարք վերառարկայական առանցքային կոմպետենցիաներ:

Նախագծային ուսուցման տեխնոլոգիայի նպատակը տարաբնույթ խնդիրների ինքնուրույն լուծման կարողությունների ձևավորումն է, սովորողների ինքնազարգացման ապահովումը: Նախագծային ուսուցման տեխնոլոգիայի իրագործման դեպքում սովորողն անմիջականորեն ներառվում է ակտիվ իմացական գործընթացների մեջ, նա ինքնուրույնաբար ձևակերպում է իր խնդիրը, իրականացնում է անհրաժեշտ տեղեկույթի հավաքագրում, պլանավորում է խնդրի

լուծման տարբերակներ, եզրակացություններ է անում, վերլուծում է սեփական գործունեությունը և արդյունքում ձեռք բերում նոր գիտելիքներ ու կենսափորձ: Այն կարելի է կիրառել ուսուցման ցանկացած փուլում, տարբեր տարիքային խմբերում: Այն հարմար է բոլոր ուսումնական առարկաներն ուսումնասիրելիս և նշյալ պատճառներով այն **համապիտանի** գործիք է:

Նախագծերի մեթոդն այսօր որոշակի փոփոխություններ է կրել և որոշ չափով հեռացել է Դյուիի պրագմատիկ մոտեցումից, սակայն էությունը մնացել է նույնը. խթանել սովորողների հետաքրքրությունը որոշակի պրոբլեմների հանդեպ և նախագծային գործունեությամբ լուծել այդ պրոբլեմները, ձևավորել պրակտիկայում գիտելիքները կիրառելու կարողություններ, զարգացնել քննադատական մտածողությունը:

Նախագծերի մեթոդը միշտ ենթադրում է ինչ որ հիմնախնդրի լուծում: Այն մի կողմից ենթադրում է ուսուցման տարբեր միջոցների ու մեթոդների կիրառում, մյուս կողմից՝ տարբեր բնագավառներից ձեռք բերած գիտելիքների ստեղծագործական կիրառում, ասել է թե՛ միջառարկայական գիտելիքների ու կապերի ակտիվ օգտագործում: Նախագծերի մեթոդը պահանջում է նաև, որ իրականացված հետազոտության արդյունքները շոշափելի լինեն, այսինքն՝ ստացվի կոնկրետ տեսական կամ էմպիրիկ արդյունք, որ կարող է օգտագործվել իրականության որևէ բնագավառում:

Նախագծային ուսուցման տեխնոլոգիայի *նպատակն* է, որ սովորողները.

- Սովորեն ինքնուրույն հասնել արդյունքի
- Սովորեն կանխատեսել նպատակին հասնելու ճանապարհին առաջացած խնդիրները և դրանց լուծման ուղիները
- Կարողանան աշխատել տեղեկատվական աղբյուրներով,
- Ձեռք բերեն հետզոտություններ կատարելու կարողություններ,
- Ձեռք բերեն խմբում աշխատելու և գործնական հարաբերություններ ձևավորելու հմտություններ, համագործակցային կոմպետենցիաներ
- Ձեռք բերեն սեփական աշխատանքը ներկայացնելու և ստացած արդյունքները հիմնավորելու հմտություններ

- Ձեռք բերեն անդրադարձ կատարելու, սխալները և դժվարությունները մեկնաբանելու հմտություններ:

Նախագծային ուսուցման տեխնոլոգիայի արդյունավետ կիրառումը ներառում է՝

- խնդրի առաջադրումը, որի լուծումը պահանջում է ներառարկայական և միջառարկայական մակարդակում գիտելիքների ինտեգրում և հետազոտական, որոնողական հնարների կիրառում,
- սովորողների ճանաչողական կարողությունների և հմտությունների զարգացումը,
- խնդրահարույց իրավիճակներում, տեղեկատվական դաշտում ինքնուրույն կողմնորոշվելու կարողությունները,
- ակնկալվող արդյունքների գործնական, տեսական, ճանաչողական նշանակությունը,
- քննադատական մտածողության զարգացումը,
- նախագծի կառուցվածքի բովանդակային և գործնական մասերի փուլային կատարումը,
- հետազոտության մեթոդների քննարկում և վերջնարդյունքների ամփոփումը:

Նախագծային ուսուցման տեխնոլոգիայի կիրառման կարողությունը խոսում է ուսուցչի մասնագիտական կոմպետենցիաների ձևավորվածության մասին: Այդ գործընթացի իրականացումն ուսուցչից պահանջում է՝

- հետազոտական, որոնողական մեթոդների և հնարների համալիրի կիրառում,
- հետազոտական աշխատանք, ուսումնական բանավեճ կազմակերպելու և անցկացնելու կարողություն,
- սովորողներին առաջադրված խնդրի լուծման ուղիների որոնման գործում ուղղորդում,
- ընտրված նախագծերի պրոբլեմատիկայի լուծման համար գիտելիքների ինտեգրման կարողություն:

Ակնհայտ է, որ յուրաքանչյուր նախագիծ սովորողի և մանկավարժի համատեղ, համակարգված գործողությունների արդյունք է, քանի որ ուսուցիչը սովորողին

օգնում է տեղեկույթի յուրացման գործում, կարգավորում ամբողջ գործընթացը, խրախուսում, ապահովում հետադարձ կապը:

Նախագծային ուսուցման տեխնոլոգիայի իրականացումն ընթանում է հետևյալ փուլերով.

1.Նախապատրաստական փուլ.

- նախագծի թեմայի և նպատակի ընտրություն,
- հիմնախնդրի ձևակերպում, հետազոտական հարցերի առաջադրում,
- նախագծի մասնակիցների քանակի որոշում
- աշխատանքային խմբերի ձևավորում

2. Պլանավորման փուլ

- տեղեկատվության սկզբնաղբյուրների ընտրություն,
- տեղեկույթի հավաքման և վերլուծության եղանակների պլանավորում,
- վերջնաարդյունքների պլանավորում՝ գրավոր, բանավոր հաշվետվություն ցուցադրական նյութի օգնությամբ, ֆիլմեր, պաստառներ, պատրաստուկներ և այլն,
- աշխատանքի գնահատման ընթացակարգի և չափանիշների սահմանում,
- աշխատանքային պարտականությունների բաժանում:

3.Հետազոտական աշխատանք

- տեղեկույթի հավաքում, խնդիրների միջանկյալ քննարկումներ,
- հետազոտական աշխատանքներ՝ դիտում, տեսական աղբյուրների ուսումնասիրում, փորձերի, էքսկուրսիաների կազմակերպում և այլն,
- խմբերի ինքնուրույն աշխատանքների նախագծում,

3. Եզրափակիչ փուլ

- կատարված աշխատանքի արդյունքների ներկայացում, վերլուծություն,
- եզրակացությունների ձևակերպում, արդյունքների ամփոփում,
- գործընթացի և արդյունքների ներկայացում և գնահատում:

Կախված նախագծի տեսակից՝ դրանք կարող են անցկացվել դասարանարտադասարանական սկզբունքով, այսինքն՝ աշխատանքի մի մասն անցկացվում է դասի ընթացքում /սկզբում՝ մուտք դեպի նախագիծ, վերջում՝ ստացված արդյունքների շնորհանդես/, իսկ մյուս մասը, որը դժվար է գնահատել

ժամանակի, ջանքերի, նյութերի ծախսի առումով, կատարվում է դասից դուրս: տեխնոլոգիան նախագծային Ներմուծելով ուսուցման ուսումնադաստիարակչական պրոցես՝ պետք է հաշվի առնել հետևյալը

Ներմուծելով նախագծային ուսուցման տեխնոլոգիան ուսումնադաստիարակչական պրոցես՝ պետք է հաշվի առնել հետևյալը.

1.Նախագծային ուսուցումը պետք է կառուցվի առարկայական գիտելիքների համակարգի նկատմամբ համատեղ գոյության փոխադարձ լրացման սկզբունքով:

2.Առաջին նախագծի իրականացման պահին սովորողների մոտ պետք է ձևավորվեն նախագծային գործունեության տարբեր (ամենատարրական մակարդակ) որպես առանձին կարողություններ:

3. Նախագծային ուսուցման տեխնոլոգիային կարելի է անցնել միայն այն դեպքում, երբ աշակերտը կարող է նախագծի բոլոր փուլերում աշխատել ինքնուրույն կամ փոքր խորհրդատվության օգնությամբ:

4.Պետք է կազմակերպել այնպիսի ուսումնական նախագծեր, որոնք կլուծեն ծրագրային նյութի յուրացման հարցը՝ հիմք ընդունելով հանրակրթության պետական չափորոշիչը:

5.Ուսումնական նախագծերի թիվը ուսումնական տարվա ընթացքում չպետք է գերազանցի 1-2-ը, այսինքն՝ նախագծերը շատ չպետք է լինեն:

Նախագծային ուսուցման աշխատանքի վերջում անցկացվում է դիագնոստիկա՝ ախտորոշում, որի միջոցով աշակերտը **գնահատում է** ինքն իրեն: Այդ գործընթացն ավարտվում է յուրաքանչյուր աշակերտի կողմից ինքնագնահատման հարցաթերթիկի լրացման միջոցով: Ավելի ցածր դասարաններում հարցաթերթիկը կարող է լրացնել ուսուցիչը:

Նախագիծն իրականացնելու համար անհրաժեշտ կլինի գործընկերների հետ միասին կազմակերպչական տարբեր փաստաթղթեր ստեղծել: Որոշ թեմաների դեպքում հնարավոր է, որ անհրաժեշտ լինի նաև այլ կազմակերպությունների աշխատողների օգնությունը (գիտահետազոտական ինստիտուտներ, բուհեր, թանգարաններ, գրադարաններ, համայնքապետարան, պետական կամ հասարակական կառույցներ):

ՀԱՐՑԱԹԵՐԹԻՎ (նմուշ)

Գնահատիր նախագծային տեխնոլոգիայով աշխատելու քո կարողությունները՝ օգտագործելով գնահատման հետևյալ չափանիշները:

- 3 միավոր՝ կարողանում եմ
- 2 միավոր՝ երբեմն ստացվում է
- 1 միավոր՝ հաճախ չի ստացվում
- 0 միավոր՝ չեմ կարողանում

Աշակերտի _____ անուն, _____ ազգանուն, _____ դասարան

Նախագծային ուսուցման տեխնոլոգիայով աշխատելու կարողություններ	Նախագծի սկզբում	Նախագծի վերջում
1.Ձևակերպել խնդիրը		
2.Դնել նպատակ		
3.Առաջադրել խնդիրներ		
4.Ընտրել խնդրի լուծման ուղիներ, մեթոդներ, միջոցներ		
5.Պլանավորել աշխատանքը		
6.Կազմակերպել խմբի աշխատանքը		
7.Համագործակցել /լսել մյուսների կարծիքը, արտահայտել և հիմնավորել սեփական կարծիքը, տեսակետը և այլն/		
8.Ընտրել նպատակը՝ որպես նախագծի վերջնական արդյունք		
9.Ընտրել վերջնարդյունքի ներկայացման ձևը		
10.Կատարված նախագծային աշխատանքում գտնել ուժեղ կողմերը		
11.Կատարված նախագծային աշխատանքում գտնել թույլ կողմերը		
12.Նշել թե նախագծի կատարումը ինչ տվեց		

Անդրադարձ կատարելու համար տրվում են հետևյալ հարցերը.

1. Ի՞նչը քեզ օգնեց բարեհաջող իրականացնել նախագիծը:

2. Նախատեսվածից ի՞նչը չհաջողվեց իրականացնել և ինչու /թույլ կողմերը/:

3. Ի՞նչ տվեց նախագծի իրականացումը:

Նախագիծը գնահատելու համար կազմվում է փորձագետների խումբ՝ կազմված ուսուցիչներից ու համադասարանցիներից: Խմբային նախագծերի պաշտպանության ժամանակ սովորողներին կարելի է գնահատել նաև անհատապես:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԻ ՆԿԱՐԱԳԻՐ

Թեման՝ Բացիկ

Նպատակները՝

1. Բացիկի՝ որպես հաղորդակցության միջոցի, դերի և նշանակության բացահայտում:
2. Բացիկի տեսակների, ոճերի և գրության ուսուցում:
3. Բացիկ գրելու կարողության զարգացում:

4.Ստեղծագործական հաղորդակցական կարողությունների զարգացում:

Ուսումնական նյութեր՝ գործնական գրությունների նմուշօրինակներ. Բացիկի նմուշօրինակ:

Ուսուցման մեթոդներ՝ փոխգործուն գրառումների համակարգ, ստեղծագործական աշխատանք:

Ուսումնական գործունեության եղանակը՝ խմբային և անհատական աշխատանք:

Ընթացքը. Կիրառվում է ԽԻԿ համակարգը:

- 1.Խթանման փուլում կիրառվում է <<Փոխգործուն գրառումների համակ.>> մեթոդական հնարը:

ԳԻՏԵՄ	ԻՄ ԻՄԱՑԱԾԻՆ ՀԱԿԱՍՈՒՄ Է	ՆՈՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ Է	ԱՆՀԱՍԿԱՆԱԼԻ Է,ՇՓՈԹԵՑՆՈՂ Է	ՀԵՏԱՔՐՔԻՐ Է, ԿԱՐԵԼԻ Է ՔՆՆԱՐԿԵԼ

Յուրաքանչյուր նստարանին դրվում է մեկական նմուշօրինակ: Առաջադրվում է զույգերով ծանոթանալ, գտնել, թե գործնական գրության որ տեսակն է ներկայացված և լրացնել աղյուսակը:

Այսպես՝

Լոռու մարզի Գուգարքի
№1 դպրոցի տնօրեն
պարոն Թ. Հարությունյանին
նույն դպրոցի 10-դասարանի
աշակերտ Հայկ Ավետյանից

2010 թվականի փետրվարին դպրոցականների առարկայական հանրապետական օլիմպիադայում <<Հայոց լեզու>> առարկայից արժանացել եմ պատվոգրի և պարգևատրվել Ծաղկաձորում հանգստանալու ուղեգրով: Խնդրում եմ մեկնումս թույլատրել:

Դիմող՝ (ստոր.) Հ. Ավետյան

5 ապրիլի 2010թ

2)Մանե Աշոտի Նազարյանը սովորում է Լոռու մարզի Գուգարքի №1 դպրոցում: Նա կարող է դպրոցական արձակուրդների ժամանակ օգտվել դպրոցի գրադարանից:

Դպրոցի տնօրեն՝ (ստոր) Թ. Հարությունյան

18 մարտի 2010թ.

3)Հրատարակվել և արդեն գրախանութներին է հանձնվել Հ. Թումանյանի երկերի լիակատար ժողովածուն՝ հինգ հատորով:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 5-28- 93

Վանաձորի «Դպրատուն» տպագրատան տնօրեն

4)Սիրելիներ՝ ը, Նոր տարվա կապակցությամբ հղում ենք ձեզ մեր շնորհավորանքներն ու սրտագին բարեմաղթանքները: Ցանկանում ենք երջանկությամբ և Աստծու շնորհներով լի տարի:

Կարոտով՝ Աշոտ, Արամ:

Սովորողները գտնում են գործնական գրությունների տեսակների անունները, աղյուսակում նշումներ կատարում, և քանի որ մենք մեր դասերի ընթացքում կանգ չենք առել բացիկի՝ որպես գործնական գրության տեսակի վրա, աղյուսակում այն զետեղում ենք վերջին սյունակում:

2. Իմաստավորման փուլում ուսուցիչն առաջարկում է փոքրիկ խմբերով մտածել և ներկայացնել՝ ինչ գիտեք բացիկի մասին:Խմբերը թվում են բացիկին բնորոշ հատկանիշները:

1) Բացիկը բաց, չծրարված, կարճ տեքստով նամակն է, որ գրվում է հատուկ այդ նպատակով պատրաստված փոքրիկ թերթիկի վրա:

2) Բացիկների մեջ սովորոբար հայտնվում են կարճ տեղեկություններ՝ շնորհավորանք, ցանկություն և այլն:

3) Գեղեցիկ պատկերներով բացիկները ուղարկում են փոստով, ֆաքսով, համացանցով, երբեմն՝ անձամբ:

4) Բացիկի շնորհիվ միավորվում են աշխարհի տարբեր ծայրերում ապրող մարդիկ՝ հանուն արդար ու խաղաղ կյանքի, ընդդեմ բնական աղետների ու չարության:

3. Ուսուցիչը դասարանին առաջարկում է այդ օրերին տեղի ունեցած որևէ հոգեցունց դեպք հիշել իրենց առօրյա կյանքից: Սովորողները, միմյանց լրացնելով, պատմում են աշխարհը ցնցած Բեսլան քաղաքում կատարված ահաբեկչության մասին: Սովորողները մերժում են ահաբեկչությունը՝ այն համարելով մեր դարի ամենամեծ ոճիրը: Սովորողները հայտնում են իրենց վերաբերմունքը մարդասպանության, ցեղասպանության վերաբերյալ, խոսում են Հրանտ Դինքի մասին: Ուսուցիչը առաջարկում է խմբերին մտածել թեմայի և ձևավորման շուրջ: Խմբերն առաջարկում են դիմել մոլորակի մարդկությանը, զարթնեցնել մարդկության խիղճը, բռնել այն ձեռքը, որ սպանում է մարդուն, լռեցնել զենքի ձայնը:

Ուսուցիչը դասարանին առաջարկում է կազմել բացիկի պլան:

1) Դիմում հասցեատիրոջը, որը կոչական բառ է:

2) Բովանդակությունը շարադրվում է պարզ, հասկանալի, կարող է նաև զեղարվեստական և պատկերավոր ձևով շարադրվել:

3) Բացիկի մյուս էջին կարող է լինել պատկեր, կարող է չլինել:

Էկրանին ցուցադրվում են բացիկի տեսակներ, մեկնաբանվում են: Աշակերտները կատարում են նշումներ աշխատանքային տետրում:

Կշռադատման փուլում ուսուցիչը դասարանը բաժանում է 5 խմբի և առաջարկում խմբերին տարբեր թեմաներով բացիկներ պատրաստել:

1-ին քայլ: Էկրանին ցուցադրվում են նմուշօրինակներ, և խմբերին առաջարկվում է ընտրել դրանցից մեկը և լրացնել բովանդակային կողմը:

2-րդ քայլ: Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր գրածը: Քննարկվում և կատարվում է մտքերի փոխանակություն:

4. Գնահատում ենք և հանձնարարում տանը պատրաստել բացիկներ՝

«Վերջին զանգ» «Ծննդյան օր», «Գարուն»:

Այսպիսով՝ հետազոտությունս փաստում է, որ կապակցված խոսքի տեսակների ուսուցումը նպաստում է սովորողների մտքերի, զգացմունքների ու ապրումների արտահայտմանը, բազմազան ոճերի կիրառությամբ տեքստ կազմելու հմտությանը, ստեղծագործական կարողությունների բացահայտմանն ու դրանց հետագա մշակմանը: Կապակցված խոսքի տեսակների ուսուցման յուրաքանչյուր դաս ունի նաև բացառիկ նշանակություն ապագա անհատի ու քաղաքացու բարոյական կերպարի և արժեքային համակարգի ձևավորման գործում:

Գնահատման սանդղակը

Հանձնարարված տեսակին բնորոշ առանձնահատկությունների պահպանում	2 միավոր
Լեզվական առանձնահատկությունների պահպանում	2 միավոր
Շարադրանքի ինքնատիպությունը	2 միավոր
Հեքիաթի նկարագարում	2 միավոր
Ուղղագրական և կետադրական կանոնների պահպանում	2 միավոր

Նամակ

Սահմանված կառուցվածքի պահպանում	2 միավոր
Համապատասխան ոճի (մտերմական, խոսակցական և պաշտոնական) առանձնահատկությունների պահպանում	2 միավոր
Ընդունված բանաձևային բառերի և արտահայտությունների կիրառում	2 միավոր
Նախադասության ոճական և շարահյուսական ճիշտ կառուցվածք	2 միավոր
Ուղղագրական և կետադրական կանոնների պահպանում	2 միավոր

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտությունս փաստում է, որ հայոց լեզվի գործնական ուսուցումը լեզվի նպատակային ուսուցման արդյունավետության գրավականն է: Այն նպաստում է սովորողների մտքերի, զգացմունքների ու ապրումների արտահայտմանը, բազմազան ոճերի կիրառությամբ տեքստ կազմելու հմտությանը, ստեղծագործական կարողություններն բացահայտմանն ու դրանց հետագա մշակմանը:

Գործնական ուսուցման յուրաքանչյուր դաս ունի նաև բացառիկ նշանակություն ապագա անհատի ու քաղաքացու բարոյական կերպարի և արժեքային համակարգի ձևավորման գործում:

Որքան գիտակ ու գրագետ է անհատը, այնքան առողջ է հասարակությունը, ունի զարգացած աշխարհայացք և հնարավորինս ճիշտ լեզվամտածողություն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- 1.Ա. Տեր-Գրիգորյան <<Հայոց լեզվի մեթոդիկա>>:
- 2.Հ. Ա. Հարությունյան <<Լեզվի գործնական ուսուցումը և տրամաբանական մտածողության զարգացումը>>:
- 3.Ս. Խաչատրյան <<Ուսուցման արդյունավետ հնարներ>>: